

Եթե Դուք տեղեկատվական ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքէջում, խնդրում ենք ուշադրություն դարձնել վերջինիս գործողության ամսաթվին:

Տպագիր տեղեկատվական ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել: Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք տպագիր տարբերակով, ապա մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք www.fastbank.am հասցեով, դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն՝ (+374 10) 510 000 հեռախոսահամարով:

ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ		
Վարկառու	ՀՀ ռեզիդենտ Իրավաբանական անձ, Անհատ ձեռնարկատեր	
Վարկի նպատակը	Շրջանառու միջոցների ձեռքբերում, վարկերի վերաֆինանսավորում, հիմնական միջոցների ձեռքբերում և այլ ձեռնարկատիրական գործունեության զարգացում ! Բիզնեսը պետք է գրանցված լինի և գործի առնվազն 6 ամիս	
Վարկի տեսակը	Վարկ, վարկային գիծ	
Վարկի գումար	2,000,000 – 100,000,000 ՀՀ դրամ	5,000-250,000 ԱՄՆ դոլար
Վարկի արժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Վարկի ժամկետ	12-84 ամիս	12-84 ամիս
Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք/վարկային գծի օգտագործված մասի տոկոս	Վարկ՝ 13.75%, Վարկային գիծ՝ 14.25%	Վարկ՝ 11.5%, Վարկային գիծ՝ 12%
Վարկային գծի չօգտագործված մասի տոկոսադրույք	0.5%	
Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույք	Վարկ՝ 14.05-14.55%, Վարկային գիծ՝ 14.59-15.11%	Վարկ՝ 11.63-12.05%, Վարկային գիծ՝ 12.16-12.62%

Մայր գումարի մարման արտոնյալ ժամկետ	0-24 ամիս՝ կախված բիզնեսի առանձնահատկություններից
Վարկառուի ֆինանսական վիճակի վերլուծություն	Բանկի կողմից Վարկառուի ֆինանսական վիճակի և ցուցանիշների վերլուծություն, ինչպես նաև Վարկառուի գործունեության վայր ալյցելություն չի իրականացվում:
Վարկառուի (Իրավաբանական անձի մասնակիցներ/բաժնետերեր, իրական շահառու) նկատմամբ պահանջներ	Վարկային պատմություն. ✓ Վերջին 12 ամիսների ընթացքում դասակարգման բացակայություն և/կամ ժամկետանց պարտավորությունների օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը: ✓ Գործող ժամկետանց պարտավորությունների բացակայություն: Անհատ ձեռնարկատեր հանդիսացող Վարկառուի տարիքը՝ 18-65 տարեկան:
Մարման եղանակ	Վարկի դեպքում. ✓ Անուիտետային /մայր գումարի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ վճարում/ ✓ Դիֆերենցված/ Մայր գումարի ամենամսյա հավասարաչափ և տոկոսագումարի ամենամսյա վճարում/ ✓ Անհատական վճարումների ժամանակացույց՝ կախված բիզնեսի առանձնահատկություններից: Վարկային գծի դեպքում. ✓ Տոկոսագումարի ամսական վճարում ✓ Մայր գումարը ժամկետի վերջում կամ անհատական վճարումների ժամանակացույց՝ կախված բիզնեսի առանձնահատկություններից: Մարման եղանակը՝ ըստ հաճախորդի ընտրության:
ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐ, ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ	
Վարկի տրամադրման և սպասարկման վճար	Չի սահմանվում
Ժամկետանց մայր գումարի տույժ	0.1% օրական

Ժամկետանց տոկոսի տույժ	0.13% օրական
Վարկի վաղաժամկետ մարման տույժ	Վաղաժամկետ մարվող գումարի 5%-ի չափով: Կիրառելի է 5,000,000-ից կամ համարժեք արտարժույթից ավելի պայմանագրային գումարով վարկերի դեպքում:
Վարկային գծի պայմանագրի սահմանաչափի վաղաժամկետ նվազեցման կամ պայմանագրի դադարեցման տույժ	Սահմանաչափի նվազեցման դեպքում՝ նվազեցվող գումարի մեծության 5%-ի չափով: Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ գործող սահմանաչափի 5%-ի չափով: Կիրառելի է 5,000,000-ից կամ համարժեք արտարժույթից ավելի պայմանագրային գումարով վարկերի դեպքում:
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑ	
Ապահովման միջոց	Միայն անշարժ գույք:
Վարկ/ Գրավ առավելագույն արժեք	Գրավի գնահատված շուկայական արժեքի առավելագույնը 60%:
Գրավի գնահատում	Գրավը ենթակա է գնահատման Ֆասթ Բանկ ՓԲԸ-ի հետ համագործակցող գույքի գնահատում իրականացնող անկախ գործակալության և/կամ Կազմակերպության աշխատակցի կողմից՝ կախված վարկի գումարի չափից: Բանկի աշխատակցի կողմից գնահատումն իրականացվում է անվճար:
Գրավադրման հետ կապված ծախսեր	Իրականացվում են Հաճախորդի կողմից:
Գրավի հետ կապված այլ պայմաններ	Վարկային հայտի դիտարկման պահին՝ գրավադրվող գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վկայականի տրամադրման ժամկետը 12 ամսից պակաս լինելու պարագայում Բանկը կարող է պահանջել գույքի ձեռքբերման հիմքերը հայտի դիտարկման փուլում:
ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ	

Վարկի տրամադրման Վերաբերյալ որոշման կայացման	Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում մինչև 2 աշխատանքային օրվա ընթացքում:
Որոշման մասին տեղեկացման ժամկետ	Որոշման կայացումից հետո մինչև 1 աշխատանքային օր:
Վարկի տրամադրման ժամկետ	Պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց և գրավի իրավունքի պետական գրանցումը իրականացնելուց հետո՝ մինչև 1 աշխատանքային օր:
Որոշման վավերականության	30 աշխատանքային օր Ընդ որում, Բանկը իրավասու է մերժել վարկի տրամադրումը, եթե փոփոխվել են վարկի տրամադրման դրական որոշում կայացնելու համար էական համարվող պայմաններից որևէ մեկը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- Երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունները և դրանց վճարներն են.
 - Անշարժ գույքի՝ այդ թվում հողամասի, գրավադրման դեպքում.
 - ✓ Անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ 10,000 ՀՀ դրամ,
 - ✓ Գրավի պետական գրանցման վճար՝ 26,000 ՀՀ դրամ,
 - ✓ Նոտարական վավերացման վճար՝ 16,000-20,000 ՀՀ դրամ:
 - ✓ Գույքի գնահատման վճար՝ 15,000-25,000 ՀՀ դրամ:
 - Անկախ սույն պայմաններում նշված 3-րդ անձանց վճարների դրույքաչափերից, վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել:
 - Վարկի տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից:
 - Վարկը տրամադրվում է անկանխիկ եղանակով:
 - Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև Կազմակերպության հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների և անկախ գնահատողների ցանկը սահմանվում են առանձին Հավելվածներով:
 - Վարկը տրամադրվում է Բանկի «Հին Նորք», «Շրջանային», «Ավան», «Դավթաշեն», «Մովսես Խորենացի», «Սեբաստիա», «Կոմիտաս», «Բաղրամյան», «Թումանյան», «Էրեբունի», «Հարավ-Արևմտյան», «Շենգավիթ», «Ալեք Մանուկյան», «Տիգրան Մեծ», «Արմավիր», «Արտաշատ», «Մասիս», «Գորիս», «Գյումրի»,

«Վանաձոր», «Աբովյան», «Հրազդան», «Էջմիածին», «Մարտունի», «Սևան», «Գավառ», «Անի», «Աշտարակ», «Իջևան», «Վեդի», «Արթիկ», «Եղեգնաձոր», «Կապան», «Չարենցավան», «Ալավերդի», «Քաջարան» մասնաճյուղերում:

7. Վարկի տրամադրման դրական որոշման կայացման գործոններն են.

✓ Վարկառուի և Գրավի համապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:

8. Վարկի մերժման գործոններն են.

✓ Վարկառուի և/կամ Գրավի անհամապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:

9. Վարկի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Կազմակերպության կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Կազմակերպությանը Վարկային պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Կազմակերպությունն իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել:

10. Արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսագումարների (առկայության դեպքում նաև տույժերը, տուգանքները) գանձման, ինչպես նաև տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի համար հիմք է հանդիսանում ՀՀ ԿԲ կողմից սահմանված տվյալ օրվա հաշվարկային փոխարժեքը:

11. Տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել՝ կախված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքի մեծության փոփոխությունից:

12. Հաճախորդի կողմից վարկի վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում են՝ վարկի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տոկոսները, միջնորդավճարները և սպասարկման վճարները (առկայության դեպքում), իսկ տույժերը/տուգանքները (առկայության դեպքում) վարկի մարման նպատակով կատարված փոխանցումների համար և/կամ այլ գործառնությունների համար գանձվող միջնորդավճարները, վարկի սպասարկման նպատակով բացված հաշիվների սպասարկման համար գանձված գումարները, գործարքի նոտարական վավերացման, գրավադրվող գույքի պետական գրանցման և գնահատման դիմաց 3-րդ անձանց վճարված գումարները նվազեցման ենթակա չեն:

13. Ոչ ֆինանսական ծառայությունների սակագները, այդ թվում քաղվածքների, պայմանագրերի կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները հրապարակված են Կազմակերպության պաշտոնական կայքում՝ www.fastbank.am, ինչպես նաև տեղադրված են Կազմակերպության գործունեության վայրերում:

14. ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԺՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՎՐԱ:

15. ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՆԱԳԱՆՁՎԵԼ:

16. ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ ՊԱԿԱՍ Է ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՀԱՆՁԻ ԵՎ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԻՑ, ԱՊԱ ՎԱՐԿԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱԿԱՍ ԳՈՒՄԱՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ:

17. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ

- ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՂ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:
18. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ (www.fastbank.am):
19. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՈՐՈՆՑ ԿԱՐՈՂ ԵՔ ԾԱՆՈԹԱՆԱԼ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋՈՒՄ՝ <https://www.fastbank.am>: ԲԱՆԿԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԵՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՈՐԸ ՉՊԵՏՔ Է ԳԵՐԱԶԱՆՑԻ ՄԵԿ ԱՄԻՍԸ, ՎԱՐԿԱՌՈՒՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԲԽՈՂ ՍՊԱՌՈՂԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ:
20. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՁԵՂ ԿՏՐԱՄԱԴՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏԻՈՒԹՅՈՒՆ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀՐԱԺԱՐՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ՝ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՄ ԿԱՊԻ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՈՎ:
21. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵՂ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:
22. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ՁԵՂ ԿՏՐԱՄԱԴՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵՂ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:
23. ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԵՐԱՇԽԱՎՈՐԻՑ ՊԱՀԱՆՋԵԼ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎԱՏԱՆԱԼՈՒ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԶՐԿՎԻ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔԻՑ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ